Արձանագրություն N 10

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Ներկա էին խորհրդի 10 անդամներից 8-ը:

Բացակայում էին՝ Արսեն Թորոսյան և Ռաֆիկ Գրիգորյան:

Հրավիրվածներ՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյան, ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Հերմինե Ասլանյան, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ Արմեն Դանիելյան, Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության գլխավոր մասնագետ Ջուլիետա Միքաելյան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների վերաբերյալ:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան:

2. Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը եվ ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման ու գնահատման կարգին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան:

3. Հաստատել ստուգումների 2020թ. տարեկան ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան:

4. Հաստատել տեսչական մարմնի գործունեության 2020թ. ծրագիրը:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան:

5. Հավանություն տալ՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան:

6. Հավանություն տալ՝ ՇՎՏՄ 2019թ.-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին նախագծին:

Զեկուցող՝ Ա.Կոտոյան:

7. Հաստատել շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների կատարողականների գնահատումները:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

8. Հաստատել որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

9. Կարծիք տալ՝ որակի ստորաբաժանման կողմից լաբորատոր ստուգումների, մաքսային մարմինների դերը շուկայի վերահսկողության և ռազմավարական ծրագրի առաջարկների վերաբերյալ:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

Նիստը բացեց խորհրդի նախագահ, էկոնոմիկայի նախարար Տ. Խաչատրյանը: Ողջունելով ներկաներին՝ արձանագրվեց, որ նիստին մասնակցում են խորհրդի 8 անդամներ, և քվորում առկա է: Ա.Կոտոյանի առաջարկով օրակարգից հանվեց 6-րդ հարցը, քանի որ դրա վերաբերյալ արդեն այլ պայմանավորվածություն էր ձեռք բերվել վարչապետի աշխատակազմի հետ: Ա.Ասոյանն առաջարկեց 2-րդ հարցը նույնպես հանել օրակարգից, այն լուծել աշխատանքային կարգով՝ տեսչական մարմնի ղեկավարի կողմից ներքին իրավական ակտ ընդունելու միջոցով:

Տ. Խաչատրանը ներկայացված օրակարգը փոփոխություններով դրեց քվեարկության՝ կողմ 8, դեմ 0:

Օրակարգը հաստատվեց:

Տ. Խաչատրյանը առաջարկեց 1-ին հարցին անդրադառնալ վերջում, ինչն ընդունվեց խորհրդի անդամների կողմից:

Հարցեր 3, 4.

Ա. Կոտոյանը առաջարկեց 3-րդ և 4-րդ հարցերը միասին քննարկել, ներկայացրեց շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2020թ. գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերը, նշեց, որ ստուգումների ծրագրում նախատեսվել է

է «Արամ Միքայելյան Գևորգի» Ա/Ձ-ն: Պատճառը տնտեսվարող սուբյեկտի գործունեության վերաբերյալ տեսչական մարմին ստացված բողոքի հիման վրա արդեն այս տարի ստուգում անցկացնելն է: Խորհրդի նախագահ Տ.Խաչատրյանը հետաքրքրվեց իրանական ցեմենտի ներմուծման և վաճառքի ոլորտներում շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ուսումնասիրության և սոտուգումների ծրագրում դրանք տեղ գտնելու մասին: Հրավիրված Ա.Մկրտչյանը հայտնեց, որ տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել է շուկան, պարզվել է, որ ներմուծում են մոտ 30 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից սակայն 6-7-ն են իրականացնում վաճառք, դրանք էլ ներառված են ստուգումների տարեկան ծրագրում: Խորհրդի անդամների կողմից մտքեր փոխանակվեցին ցեմենտի և կլինկերի նկատմամբ սահմանային վերահսկողություն սահմանելու հարցի շուրջ, խորհրդի նախագահ Տ.Խաչատրյանը հանձնարարեց ավելի խորացված ուսումնասիրել դրա հնարավորության հարցը: Խորհրդի անդամ Ա.Ասոյանը հետաքրքրվեց 350 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգման պարագայում տեսչական մարմնի ռեսուրսների բաշխման մասին, ինչին Ա.Կոտոյանը պատասխանեց, որ ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել թափուր հաստիքների համալրվելը և ծանրաբեռնվածությունը, ուստի 2019թ. ծրագրի 250-ի փոխարեն 2020թ. նախատեսվել է 350 ստուգում, չհաշված տարվա ընթացքում բողոքների հիման վրա իրականացվելիք ստուգումները:

3-րդ և 4-րդ հարցերը դրվեցին քվեարկության՝ կողմ 8, դեմ 0:

Հաստատվեցին տեսչական մարմնի 2020թ. գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերը՝ խորհրդի անդամ Ա. Ասոյանի առաջարկությունները ընդունելուց հետո:

Հարց 5.

Արմեն Կոտոյանը ներկայացրեց հարցը, նշեց, որ ՀՀ կառավարությունը 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշմամբ սահմանել է տեսչական մարմինների կառավարման խորհուրդների աշխատակարգի օրինակելի ձևը, ինչի հիման վրա կազմվել է շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը: Խորհրդի անդամ Ա.Ասոյանը առաջարկեց աշխատակարգի 7-րդ կետի 5-րդ մասը խմբագրել և փոփոխված տարբերակով հարցը դրվեց քվեարկության:

Հարցը դրվեց քվեարկության՝ կողմ 8, դեմ 0:

Հավանություն տրվեց տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգին:

Հարց 7.

Ա.Սարգսյանը ներկայացրեց հարցը, նշեց, որ 4-րդ եռամսյակի և տարեկան կատարողականի գնահատումները կներկայացվեն խորհրդի հաջորդ նիստին, 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների կատարողականների գնահատումների մեջ արտառոց փոփոխություններ չկան: Խորհրդի անդամ Ա.Ասոյանը հայտնեց, որ առկա են տեխնիկական բնույթի թերություններ և առաջարկեց նախ խմբագրել ծրագրերը և հետո քվեարկել: Խորհրդի նախագահ Տ.Խաչատրյանը առաջարկեց հաստատել՝ խորհրդի անդամ Ա.Ասոյանի կողմից ներկայացված առաջարկությունները ընդունելուց հետո:

Հարցը դրվեց քվեարկության՝ կողմ 8, դեմ 0:

Հաստատվեցին շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների կատարողականների գնահատումները:

Հարց 8.

Ա.Սարգսյանը ներկայացրեց հարցը, նշեց, որ գործունեության ծրագրում ներառվել են տեսչական մարմնի բոլոր գործառույթները, ինչպես նաև առաջարկեց հաշվետվություններ ներկայացնել կիսամյակներով: Խորհրդի անդամները փոխանակվեցին մտքերով, որից հետո որոշվեց յուրաքանչյուր եռամսյակ էլեկտրոնային եղանակով ներկայացնել հաշվետվություն, իսկ կիսամյակային հաշվետվությունները գրավոր եղանակով ներկայացնել խորհրդի նիստերին կիսամյակի ավարտից 45 օրվա ընթացքում: Խորհրդի անդամ Ա.Ասոյանը հայտնեց, որ առկա են տեխնիկական բնույթի թերություններ և առաջարկեց խմբագրել ծրագրերը և հետո քվեարկել:

Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը առաջարկեց հաստատել ծրագիրը՝ խորհրդի անդամ Ա.Ասոյանի կողմից ներկայացված առաջարկությունները և տեխնիկական բնույթի շտկումները կատարելուց հետո, և հարցը դրեց քվեարկության՝ կողմ 8, դեմ 0:

Հաստատվեց որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2020թ. տարեկան ծրագիրը:

Հարց 9.

Ա.Սարգսյանը ներկայացրեց հարցը, հայտնեց, որ որակի ապահովման ստորաբաժանումը խորացված ուսումնասիրել է շուկայի վերահսկողության ոլորտում միջազգային փորձը, աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար ունի 3 առաջարկներ՝ ռազմավարական ծրագրի կազմում, լաբորատոր ստուգումների իրականացում և մաքսային մարմինների մասնակցություն շուկայի վերահսկողությունում: Խորհրդի անդամները մտքեր փոխանակեցին այս առաջարկների շուրջ, ինչից հետո խորհրդի նախագահ Տ.Խաչատրյանը հանձնարարեց ավելի խորացված ուսումնասիրել առաջարկները՝ հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և արդյունավետությունը:

Հարց 1.

Խորհրդի անդամները քննարկեցին նախորդ նիստին տրված հանձնարարականների վերաբերյալ ընթացիկ իրավիճակը: Ա.Կոտոլյանը նշեց, որ լաբորատոր ստորաբաժանում ստեղծելու գաղափարը քննարկման փուլում է, կան մի քանի տարբերակներ, որոնցից դեռևս չի ընտրվել առավել արդյունավետը: Խորհրդի անդամ Ա.Ասոյանը նշեց, որ տեսչական մարմինների կողմից վերահսկողության շրջանակներում լաբորատոր փորձաքննությունների վերաբերյալ հարցը քննարկվել է նաև վարչապետի աշխատակազմի ղեկավարի և փոխվարչապետի մոտ, և դեռևս վերջնական լուծման չեն հանգել:

Խորհրդի նախագահ՝ _____ **Տիգրան Խաչատրյան**

Քարտուղար՝ _____ **Սուրեն Պետրոսյան**